

Կանոնագրական

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՑԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




№ 52



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԻՍ ❧ هانراکيداق HANRAKIDAG
 ՇԱԲԱԹԱԿԱՆ مجموعہ علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 52 || 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1903

Հանրագիտակի Ծրագիրը

Այս թիւով կ'աւարտի Հանրագիտակի երկրորդ տարեշրջանը։ Երկու տարիէ ի վեր մեր տուած ջանքերուն ու աշխատութեան օգտակար եղած ըլլալուն գրաւական մըն է այն յաջողութիւնը զոր գտաւ Հանրագիտակ գրեթէ ամէն դպրոցներէ ներս։

Մեր ուղղակէտն էր կազմել պատանիներու նկարագիրն, ազնուացնել անոնց հոգին եւ զանոնք մարդ ըլլալու պատրաստել։ Այս նպատակին հասնելու համար բնաւ չի խնայեցինք ո՛չ ծախք եւ ո՛չ աշխատութիւն։ Ծանօթ գրիչներ զարդարեցին հանգէսիս էջերն իրենց ծուծաւոր նիւթերով. ասոնց քով սկսնակ, նորարոյրով ծիւրեր, առաջին քայլերնին առին՝ օրինակուելով այն վարպետներէն զոր միեւնոյն թերթին մէջ կը լափէին։ Ասանկով մըղում մը տուած եղանք տղուն մտքի զարգացումին, իր աչքին առջեւ համեմատութեան դնելով վարպետին արտադրութիւնն եւ իր գրածը։ Միեւնոյն ժամանակ ջանացինք զօսցնել անոնց միտքը բարոյական, գիտական վէպերով եւ հէքեաթներով, զանազան մտամարդային հարցումներով, Պատկերը՝ աչքին խօսող ամէնէն ճարտարախօս գաղափարն, անպակաս ըրինք մեր թերթին մէջ։ Գիտական եղբիւր մէջ պարզեցինք նոր գիւտերը, բացատրեցինք շատ մը գիտական հարցեր, գիտական զօսանքներու զուարճալի ձեւին տակ ապացուցինք բնագիտական տեսութիւններ։ Պարունակութեան ճոխութեան համեմատ՝ դիւրամատչելի ըրինք նաեւ նիւթականը, 35 զրուչի փոխարէն (որու մինակ 3 զրուշը թղթատարի ծախք է) մեր ընթերցողներուն տուինք 100 էջերէ բաղկացեալ հատոր մը, առատօրէն պատկերազարդուած, եւ հիմա որ կ'սկսինք նոր տարեշրջանի մը, գոհութեամբ կը տեսնենք թէ ամէն կողմէ գնահատուեցաւ մեր ձեռնարկն. Հանրագիտակ եղաւ

ընկերն ամէն դպրոցականի :

Հոս սրտագին շնորհակալութեան պարտք մը ունինք յայտնելու մեր Ազնիւ Գործակալներու, որոնք չբաւականալով Հանրագիտակը տարածել ամենէն մեկուսացած անկիւնէն ներս, մասնակից եղան նաև անոր կատարելութեան գործին՝ իրենց դիտողութիւններով ու հրահանգներով :

Քաջալերուած այս երկամեայ նախընթացքէն, կը թեւակոխենք Հանրագիտակի երրորդ Տարեշրջանին, ունենալով այնպիսի ծրագիր մը որ կրնանք ապահով ըլլալ թէ ամենուն գնահատման պիտի արժանանայ. արդէն մեր 49րդ թիւին մէջ խօսած էինք այդ ծրագրին վրայ : Հոս աւելի ընդարձակօրէն կը բացատրենք զայն :

Հանրագիտակ էապէս ԳՐԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ շաբաթաթերթ մը պիտի ըլլայ : Ծանօթ գրիչներու ստորագրութեան քով՝ զոր պիտի տանք իբր օրինակ մեր ընթերցողներուն, պիտի դնենք գրական ասպարէզին ու արուեստին մէջ յառաջդիմելու գաղտնիքները, պիտի առաջնորդենք նորարոյս տաղանդները՝ որոնք ապագային կարող գրիչ մը ըլլալ կը խոստանան : Պիտի ծանօթացընենք գրական նոր դէմքերն ու անոնց գործերը :

Մասնաւորապէս մէկ կամ երկու էջեր պիտի յատկացնենք սկսնակի բաժինին համար : Դպրոցական չպատանիներու մեզի շրջած արձակ կամ ոտանաւոր գրութիւններէն ընտրանօք պիտի զետեղենք այդ էջերուն մէջ :

ԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ շատ աւելի ճոխ պիտի ըլլայ, ինչպէս որ արդէն պարզած ենք մեր ծրագիրը այդ մասին :

Հանրագիտակի գալ տարուան ամենէն մեծ յաջողութիւնը պիտի կազմէ՝

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀԱՆՐԱՓԻՏԱԿ

ԲԱՌԱՐԱՆԸ

Ամէն ընթերցասէր անհատ, եւ բոլոր դպրոցականները ընդհանրապէս փափաք մը ունին նոր գիրքեր կարդալով նոր բաներ սորվելու : Մարդկային ծանօթութիւններու ամբողջութիւնը այսօր անանկ անհունութիւն մը ստացած է որ կարելի չէ նոյն իսկ բացատրել. եթէ հարկ ըլլար քիչ շատ ամէն բանի վրայ ծանօթութիւն ունենալու համար, այդ նիւթերուն յատուկ գիրքերը կարդալ, աւելորդ է ըսել թէ ո՛չ մարդու կեանքը եւ ո՛չ ալ մի-

Հակ դատակարգի մը ամբողջական հարստութիւնը պիտի բաւէին ատոր: Այս նպատակին համար է որ Եւրոպական ամէն քաղաքակրթեալ աղգ մէկէ աւելի Համայնագիտարան Բառարաններ ունի, իրարմէ ձուլ, իրարմէ գերազանց ձեւով ու բովանդակութեամբ: Մենք ալ Հանացինք Հանրագիտակի մէջ տեղ մը յատկացնել մեր նիւթական միջոցները ներածին չափ, քանի որ մեր կարողութիւնը չներեր զատ գործի մը վերածել ատիկա:

Այս ձեռնարկն ի գլուխ հանելու համար մեզի գլխաւոր առաջնորդ առած ենք Լարուսի պատկերազարդ Համայնագիտարանը, որ աշխարհահռչակ համբաւ մը ունեցած է եւ այսօր տակաւին չաւարտած՝ կէս միլիոնէ աւելի բաժանորդագրուող ունի: Նոյնպէս Բ. Բուառէի զուտ գիտական բառարանն որ իր տեսակին մէջ մէկ հատիկ է ամբողջութեամբն ու կատարելութիւնովը:

Պիտի հրատարակենք Յունուարի ընթացքին մէջ խիստ հետաքրքրաշարժ վէպ մը, Քրաուր ձիւաղը, որուն մէջ ընթերցողը պիտի հետեւի այն աւանդութիւններուն՝ զորս կը պատմեն Յարալէզներու վրայ: Սովորական թերթօն-վէպերու բոլորովին անման այս պատմութիւնը առկախ պիտի պահէ մինչեւ վերջը ընթերցողին հետաքրքրութիւնը:

Ձենք խօսիր հոս Գիտական վէպերուն, զուարճավէպերուն, նշանաւոր ճամբորդութեանց արկածներուն եւայլն վրայ, զորս պիտի հրամցնենք մեր ազնիւ ընթերցողներուն եւ որոց վրայ արդէն խօսած ենք:

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20 էջէ բաղկացեալ:

Վեցամսեայ ու Եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Հանրագիտակի այս և յաջորդ թիւերէն իբր նմոյշ կը խրկենք մեր բոլոր ծանօթներուն, անոնք որ կը փափաքին բաժանորդագրուիլ, թող հաճին մեզ իմաց տալ, իսկ եթէ չեն ուզեր՝ կը խնդրուի իրենցմէ՝ թերթերէ մին ետ դարձնել վրան «իստէ» բառը գրելով:

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԷՐ

ՈՒՍՈՒՅԶԱՊԵՏ ՎԱՐԺԱՊԵՏԻՍ



ՈՒԹԵՆՈՍ ԷՖԵՆՏԻ Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Եխակ ու վարդ փաղեցի ես Մայիսին,
Աղուռ փունջ մը կապելու Ձեզ ո՛հ, նրէր.
Հագիւ հիւսուած ծաղիկները վառ, բայց սին,
Թառամեցան, գերդ մասդաւ սիւս սիրաւեր:

Ասուպներու փունջ մը գեղօն, պսալողուն,
Գիշերները երագիս մէջ կապեցի,
Ձեզի նրէր սալու խանդով մը անհուն,
Ա՛հ, պատրանք մը սրւին անոնք սոսկ՝ ինծի:

Նայուածքի մը պէս շատ արագ մարեցան,
Ասուպները — հիւսուած պրսակ Ձեզ համար —
Ծաղիկներս ալ վայրիկ մը լոկ ապրեցան...
Տա՛մ Ձեզ սրդի խաբուած սիրքը սեւահար:

* *

Նոր կը բացուէր կեանքի գարունն իմ առջեւ,
Խեղ սրդայ մը — խօլ բիթեռնիկ մ'անգիտակ —
Կը թառէի ամեն վարդի վառ՝ վերել,
Մըք զգացի սիրիս վրայ ձեռք մը տաք...:

Հո՛ն՝ « Գեղեցիկն, ձրեմարիք ու Վրսեմ, »
Քանդակեցւի անջինջ ոսկի տառերով.
Ներորդութիւնն քաւ իմ բախտս նըսեմ,
Սիրս ու հոգիս ալ՝ մեծայոյզ սրտուր ծով...:


Կապուած, գամուած « Գեղեցկին » վեհ անունին
Սիրեմ ողբը, պաշտեմ երազը սիրտի...
Ա՛հ, լանջփա սակ յոյգեր. կ'ուռին կը փերին,
Հոգիս խորն ալ դրժոխք մը կը մարի :

* * *

Իմ վերքերով, իմ ցաւերով կը հիւսեմ,
Այսօր պըսակ մը Ձեր նակսին բոլորսիք.
Ու դողդոջուն սիրտի այդ փունջը նըսեմ,
— Համակ հառաջ — Ձեզ ձօն՝ եք կ'ընդունիք :

Վարդի փոխան գոյնն այսերուս դալկահար,
Արցունքներս ալ մարգրիտի տեղ, աւա՛ղ,
Թո՛ղ զարդարեն պըսակ-վերքերս անդադար
Որ անբառամ պըսակ մ'ըլլայ սրտախալ :

Գրող



ՉԻՆԱԿԱՆ ԱՌԱՄՆԵՐ

Փղոսկրին համար է որ կ'որսան փիղը. կ'ընան ոստրէն ու կը մեռցնեն զայն՝ որպէս զի մարդարիտը հանեն անորմէն. թուրքա-կին խօսելու յարմարութիւնն է որ վանդակի մէջ կ'պահեն. այսպէս մարդուն ալ փնտր առաջ կուգայ շատ անգամ իր այն կատարելութիւններէն որոնք իրեն բուն պարծանքն են :

— Աղէկ գիտե՞մք, աղէկ խօսակցութիւն մը կ'ընան օգտակար ըլլալ, բայց աղէկ օրինակ մը շատ աւելի ազդու կերպով կ'ըստի մարդուն մտքին :

ԿԱՂԱՆԴԸ



(ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Ենեակին խորը դրուած վառարանին լայն փորին մէջ կը ճարճատէր կրակը, եւ ըմբոստ բոցէ լեզուներ շարունակ դուրս կը խուսափէին կապոյտով մը պարուրուած: Վառարանէն արտածորող տաք հոսանք մը ամբողջ սենեակը ողողած, ներկաները դաղջ ընդարմացումի մը ենթարկած էր. վառարանին վրայ դրուած սամավարը՝ անվերջ եռացումի մը մէջ, իր կափարիչին ներքեւէն դուրս կը պոռթկար շոգիի ծուէններ՝ որոնք կ'երթային անհետանալ մարմրուն սենեակին ձեղունն ի վեր:

Ընտանիքը ամբողջովին հաւաքուած էր վառարանին շուրջ: Կատակներ, անմեղ զուարճութիւններ՝ ձմեռ օրի մը տաղտուկը կը սպաննէին հոն, եւ ամէնքը զուարթ էին:

Սարգիս, պզտիկը, կը խաղար հոն իր հոլին հետ. հայրը նըուիրեր էր զանի իրեն՝ ամիս մը առաջ, և տակաւին չէր յաջողած դարձնել զանիկա: Քանի մը ժամէ ի վեր վերջին փորձ մը կ'ընէր այսօր: Յանկարծ ուրախ տպաւորութիւն մը կարդացուեցաւ իր վրայ. աչքերը շողացին. եւ գոչեց. դարձա՛ւ... այնպէս յաղթական ձայնով մը որ մէկը պիտի կարծէր լսել նոր ելլեալ մը: Ու խարազանը անգամ մըն ալ հնչեց հոլին վրայ՝ որ նազանքով կը դառնար: Ուրախ էր, բայց յոգնած: Յանկարծ ձգեց հոլը, նետեց խարազանը ու մօրը ծունգերուն քով վազելով գոչեց.

— Բայց մայրի՛կ, փոխուած է հոլս, իրաւոր փոխուած է այսօր. տե՛ս, հիմա ինչպէ՞ս կը դառնայ: Ու նորէն սկսաւ դարձընել. մայրը կը ժպտէր միայն:

Սարգիս նորէն ձգեց հոլը եւ աթոռ մը տեղաւորցնելով վառարանին մօտ, նստեցաւ ինքն ալ լուռ, մտածկոտ: Քանի մը վայրկեանի լռութենէ ետք՝ նորէն իր մանկական անուշ ու թըրթուռն ձայնն էր որ կը լսուէր.

— Բայց մայրի՛կ, ե՛ս ալ փոխուած եմ. ներսիդիս ե՛ս ալ փոփոխութիւն մը կըզգամ. տե՛ս չա՞ր եմ առջի՞ պէս: Ու անքթիթ



կը նայէր մայրիկին, իբրեւ թէ պատասխան մը ուզէր անկէ։

Մայրը ժպտեցաւ նորէն եւ համբոյր մը առաւ անոր այտերէն։

— Ձէ', չէ', մայրիկ, շարունակեց միամիտ, իրա՛ւ կ'ըսեմ փոխուած եմ, ա՛լ բարի տղայ մը պիտի ըլլամ։

Աթոռէն իջնալով՝ գնաց պատուհանին քով նստեցաւ։ Վարագոյրը վեր առաւ ու դուրս նայեցաւ։ Ա՛խ, ի՞նչ տեսարան էր ան։ Դուրսը ամբողջ ճերմակով էր ծածկուած եւ վերէն վար թիթեռնիկներու հոյլ մը կ'իջնէր ծոյլ դանդաղութիւնով մը, դարձ-



դարձիկ շարժուածքով մը։ Չարահճիկ տղաքներ՝ ձայներնին ձգած կը վազվզէին ճերմակ, կակուղ ձիւներուն մէջ, եւ ոմանք ալ ձիւնէ մարդեր կը շինէին։ Եւ ինքը յափշտակուած անդադար կը նայէր տեղացող ձիւնին։

— Մայրի՛կ, մայրի՛կ, տես, ինչպէ՛ս փոխուեր է երկիրն ալ, երկինքն ալ, ամբողջ ճերմակ է, խօսեցաւ նորէն:

— Զիւն կուգայ, զաւակս:

— Զի՛ւն, ձայնեց պզտիկն ու շարունակեց. հա՛, հա՛, հա՛, գիտե՛մ, ու սկսաւ մոլտալ:

Յուրաքանչեւ փչեց, ձմեռ սաստիկ,

Զիւնը ծածկեց երկիրը:

— Այսօր կ'երեւայ թէ ամէն բան կը փոխուի. մտածել սկըսաւ ինքնին² ու ձեռքերը գրպանը դրած, իբրեւ թէ մտէր, պըտըտկիլ սկսաւ սենեակին մէջ: Նորէն մայրիկին քով գնաց. անհանգստութիւն մը կըզգար, սիրտն անորոշ յուզումի մէջ էր. չէր կրնար մէկ տեղ մը կենալ:

— Մայրի՛կ, հարցուց նորէն, տե՛ս Զարուհին, Արշալոյսը, Օննիկը նոր զգեստներն հագեր են. անո՞նք ալ փոխուեցան հոլիս, ինծի և օգին պէս: Այսօր փոխուելու օր չըլլա՛յ հա: Եւ իբրեւ թէ նոր յիշողութեան մը տակ, գոչեց. « Հա՛, առտուն կանուխ հայրիկը իր տետրակներն ալ կը փոխէր, կը գրէ՛ր, կը գրէր »:

Նորէն սկսաւ պտտիլ. պատուհանէն տեսաւ քանի մը տղաներ՝ մաքուր հագուած. ճանչցաւ. խեղճ, աղքատի տղաներ էին որոնք ամէն օր ցնցոտի կը հագնէին. զարմացաւ. « Նայէ՛, Օննի՛կ եղբայր, գոչեց, այս աղքատներն ալ ինչպէ՛ս փոխուեր են: Ու մէկէն հարցուց, « Ուրկէ՞ գտեր են այս հագուստները »:

— Հարուստները նուէր տուած են:

— Հապա հարուստները աղքատներուն չեն օգներ, կ'ըսեն. այսօր անոնց սի՛րտն ալ փոխուած է »: Իր նայուածքն անմիջապէս գամուեցաւ պատէն կախուած գեղեցիկ օրացոյցի մը վրայ. « Ի՛նչ օրացոյցն ալ փոխուեցաւ, » գոչեց. կարծես կէս մը դժգոհ այս փոփոխութիւններէն, ցատկեց աթոռ մը առաւ և անոր առջեւ կեցաւ, տակի գեղեցիկ պատկերը դիտելու. այն տեսն օրացոյցին վրայ հետեւեալ բառերը իր ուշը գրաւեցին

1904 Յունուար 1 Կադանդ

— Ի՛նչ, մայրիկ, հարցուց նորէն կրակոտ շեշտով մը. տարի՞ն ալ փոխուեցաւ, ամի՛սն ալ:

Մայրը այս անգամ գրկեց զսուակն եւ համբոյներու մէջ ողողեց: « Այսօր տարին լմնացաւ եւ փոխուեցաւ, զաւակս, պատասխանեց: Այսօր Կադանդ է եւ պէտք է որ ամէն բան նորուի. հասկցա՞ր: Այո՛, ինչպէ՛ս ձիւնը փոխեց երկիրը. քոյրերդ փոխեցին իրենց զգեստներն եւ գէշ բնաւորութիւնները: Տեսա՞ր, հայ-

րիկդ ի՞նչպէս փոխեց իր տեսարանները. անձ, ի՞նչպէս փոխուեցաւ քու հոլդ, պատին օրացոյցը, Այսպէս, զաւակս, Կաղանդը բոլոր աղտոտները կը մաքրէ, չար տղաքը բարի կ'ընէ. Զաւակս, կ'ուզեմ որ Կաղանդը քեզ ալ բարի ընէ. ո՛չ ասկէ ետքը սիրտս չախտի հատցնես, այնպէս չէ՞: » Ու անոր ձեռքէն բռնած զանկա կա անզգալապէս կ'առաջնորդէր սեղանատունին դուռը. զոր բացածին պէս Սարգիս ապշեցաւ, տեսնելով խոշոր կլոր սեղանը զարդարուած՝ պտուղներով, Կանուչեղէններով, կերակուրներով, որոնք ծածկուած էին քօղով մը:

— Օ՛խ, ճիւ, ի՞նչ ազւոր է սեղանը. Կաղանդը փոխեց սեղանն ալ, անանկ չէ՞ մայրիկ, ան ի՞նչ բարի Կաղանդ է. օ՛խ, ֆիւ, օ՛խ. Կաղանդ է այսօր:

Աղանդաւորաւոր

ԲԱՐԵՍԻՐՏ ՉԻՆԱՅԻ ԳԱՒԱՌԱՊԵՏԸ

Չինացի գաւառապետ մը փոխանակ հարստանալու իր պաշտօնին մէջ աղքատացեր էր: Երբոր իրեն տեղն ուրիշ մը յաջորդ դրուելով իր ծննդավայրը կ'դառնար, ճամբան տեսաւ աղքատ գրագէտ մը նոր մեռած, դիակն ալ երեսի վրայ թողուած: Հանեց իր ամենէն ընտիր զգեստն ու ծածկեց գալն. ծախեց իր ձին ու անով յուղարկաւորութեան ծախքերը վճարեց. եւ գոհ եղաւ ձիուն տեղն եզ մը գնելով, ճամբան շարունակելու համար: Երկու օր յետոյ՝ վերջին կարօտութեան մէջ ինկած ընտանեաց տէր մարդու մը հանդիպեցաւ, որ անօթութենէ մեռնելու վրայ էր իր ընկերոջն ու զաւակներովը: Ծախեց եզն եւ անոր ստակը հանեց անոնց տուաւ: Ըսին ոմանք իրեն՝ թէ կարեկցութեան չափն անցուցիր:

— Դուք կ'խաբուիք, պատասխանեց գաւառապետը, բայց իմ սիրտս զիս չի խաբեր: Հարկաւոր է որ այս մարդն ապրի իր ընտանեաց պահպանութեան համար եւ երկրին բարի քաղաքացիներ հասցնելու համար. ընդհակառակն շատ անտարբեր բան է որ կս ձիով կաթ եզի մը վրայ նստած դառնամ իմ տունս:



Խ Օ Ս Ք

Ն Ո Ր Տ Ս Ր Ք Ն

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՓՈԲՐԻԿ ԲԱՐԵԿԱՍԴՆԵՐՈՒՆ



Առ տարուան ծագեց զուարթ առաւօտ ,
 Ծիծաղկոս դէմքով ու արջով կարօտ :
 Ետե՛ն զրպաններդ, ձեռքերդ եւ լեցուն ,
 Կաղանդի համար նուէրներ սիրուն :


Բարի գալուստդ քու երջանկաբեր ,
 Ծիշք կրպակսե՛իկ արջով մ'անհամբեր ,
 Հիւնցաւ ամէն բան , եղան ցիրուցան ,
 Անգար մ'աչ վայելե՛նք կաղանդի սեղան :

* * *

Բայց թէ ո՛վ տարի, քու գալուստդ այսօր
 Յոյսեր , բարիքներ բերէ աննրման ,
 Եւ թէ, իրաւամբ , քու գործդ է՝ խաղաղ
 Ետե՛ր , նորոգե՛ր մեր կեանք ու կենցաղ :

Այս դարուն մէջ , ո՛հ , շատ շատ կը հիւնեան
 Տղու խաղն , հաճոյք , հանդերձ ամէն բան ,
 Ուսի , ո՛վ Կաղանդ , ըսէ թէ յա՛րժեք
 Շուտ շուտ , տարիս գալ քանի մ'անգամներ :

ՀՏԻ-Ջ





ԱՄՂԱՆՊԸ

ուլելով կը փչէ հիւսիսակը. երկինքի զուարթ կապոյտը վաղուց արդէն ծածկուեր է ձիւնաբեր, բարդ բարդ ամպերով. հակառակ ցուրտ հովին ու բուքին, փողոցներուն մէջ ու տանիքներուն վրայ տղոց ճռուողիւնները կը լսուին: Կաղանդի իրիկունն է որ կը մօտենայ եւ ամէն տղու աչքին մէջ ժպիտ մը կայ եւ լեզուին ծայրը պարծանք մը որոնք իրիկուան առնելիք ընծաներուն շուրջ կը դառնան:

Մեր ժողովուրդն սա խաբուսիկ համոզումն ունի թէ՛ կաղանդին օրն եթէ մէկը տրտմի ամբողջ տարին տրտում կ'երթայ. մանուկ հասակը սակայն ո՛չ համոզում կրնայ լուծել եւ ո՛չ ապագան նախատեսել: Մանուկն ուրախ չէ այն համոզումով թէ նոյն օրուան ուրախութիւնն ամբողջ տարի մը պիտի տեւէ. վաղուան տրտմութիւնն անգամ կը մոռնայ ա՛ն՝ երբ գրպանն անուշեղէնով լեցուն է, ոտքը նոր կօշիկն հագեր, գլուխը նոր գլխարկը դրեր է եւ տակաւին իրիկուան ի՛նչ անուշ բաներ պիտի ստանայ մայրիկէն ու ի՛նչ սիրուն խաղալիկներ հայրիկէն...: Ներկային աղուրութիւնն ու քանի մը ժամէն ներկայ ըլլալիք ապագային մէջ ունենալիք պարգեւները կը հրճուեցնեն տղայ հասակն որ տակաւին քիչ առաջ կաթիլ մը կաթին մէջ կը մոռնար ամէն բան:

Ամառի վերջալոյսի կարմրուկ ամպերը չունի նոր ծարիի վերջալոյսը. ջրոտ ձիւն մը կ'սկսի թափթփիլ միօրինակ իջուածքով. սառած ձիւնին վրայ նոր ու աւելի ճերմկուկ խաւ մը կը փռուի, անցորդներ դադրեր են, փողոցները թափուր ու խաղաղիկ, մինակ երբեմն տան մը տաքուկ սենեակէն խուլ ձայներ մը դուրս կ'ելլեն. Կաղանդ է ու ամէն մարդ ուրախ:

* * *

Մտի՛ր որբեւայրիին խրճիթէն՝ աւելի խշտիկէն ներս. ցած խղիկ մ'է, տանիքը խոտերով ծածկուած՝ որուն վրայ հիմա ձիւնի խաւ մը կը հանգչի. ցուիքի տեղ ծառայող ցախերուն ծայրերէն կախուեր են սառուցիկներ, տուններէ զատուած, առանձնացած այս խրճիթն իր չորս պատերուն վրայ անհուն ծափեր ունի, ուրկէ ներս կը մտնեն հիւսիսակն ու խորշակն անկրակ տղեկները սառեցնելու կամ թոռմեցնելու համար. քառակուսի ցածկէկ դուռ

մը, աւելի հաւնոցի ծակ մը, ուրկէ ներս մտնելու համար երկու կտոր հարկ է ըլլալ. մինակ պատուհան-դուռն է այս տնակին. ներսը, առաստաղին վրայ սեւ խաւ մը կայ, զարմանալի չէ քանի որ այս խղիկին մէկ անկիւնը երկու աղիւս ու քար մը խեղճուկ օճախ մը կազմեն ուր երբեմն ամառուան մէջ հաւաքուած չոր շիւղեր կը մխան եւ սակայն հիմա թութի բարակ ճիւղի մը նուազուն կրակն անգամ չիկայ:

Կաղանդի օրն երբ ամէն մարդ խրախճանքի մէջ է, երբ մեծ ու պզտիկի դէմքին վրայ ուրախութիւն մը կը փալփիլի, ո՛հ, հո՛ս այս տնակին մէջ չորս ոտքերով խարխուլ աթոռակ մ'անգամ չի կայ որպէս զի գէթ անգուլթ ցուրտին խայթուածքներէն մասամբ ազատի որբեւայրին իր ծծկեր տղեկովն ու երկու մատղշուկ աղ-լիկներովն որոնց դէմքն ու աչքերը չատ պերճութեամբ կը խօսին իրենց նայող աչքերուն: Մտէ՛ք ներս, մի՛ վարանիք ո՛վ ճոխութեան զաւակներ. տեսէ՛ք ահա սա լուռ մթնոլորտին մէջ չորս մարդու շուքեր. տեսէ՛ք թէ ծծկեր մանկիկն ի՞նչպէս փարած է մօրը սմբած ստինքին. արդեօք կաթիլ մը կաթ կրնա՞յ գտնել խեղճ մանկիկը. տեսէ՛ք մերկ մանկիկն որուն մարմինը քուրջերու հաւաքածոյ մը կը ծածկէ. տեսէ՛ք սա պզտիկ որբուկներն որոնք իրենց վիճակին քչիկ մը գիտակից լուռ կը մնան յաւէտ ու գուրգուրանքով կը գրկեն պզտիկ տղեկն, որ հագիւ թէ կրնայ մերկ սրունքները ծածկել. տեսէ՛ք ձէթի ճրագն որ կը բուլբուլայ, հագիւ քչիկ մը ձէթ կայ հո՛ն, ուր բարակ պատրոյգ մը օձի պէս պլորուներ է, բարակ շիւղ մ'ալ ահա որով երբեմն կը մխտեն պատրոյգը՝ աղօտ լոյսը լուսաւորելու համար. հիմա կը մարի ճրագը. մայրը կը լռէ խնայողութիւն սեպելով պատրոյգը չմխտելն, իսկ երկու աղջնակները որ հագիւ քչիկ մը տաքցուցեր են իրենց տեղերն աւելի աղէկ կը սեպեն մուծը նստիլ քան թէ տաք տեղերէն ելնել:

Խեղճ արարածներ, չէ՞ք գիտեր թէ այսօր Կաղանդ է ու երբ այսօր այսպէս տխուր ու լուռ է, ամբողջ տարին այսպէ՞ս պիտի երթայ:

— Բայց երկինքի ձեռքով գլուած ճակատագիրը չէ՞ այս:

* * *

Լսեցէ՛ք, երեւակայեցէ՛ք ո՛վ սեծատուններու զաւակներ, դո՛ւք որ ձմեռին ցուրտ ու սուր խայթուածքները չէք զգար ձեր մարմինին վրայ. դո՛ւք որ տաքուկ սենեկին մէջ կը ճռուողէք գարնան թռչուններու պէս, դուք որ անօթութեան սուր ճիւղանները չէք զգացեր ձեր աղիքներուն վրայ, դո՛ւք որ որբութեան

Թուք ու մուրէն զերծ էք յաւէտ . դո՛ւք վերջապէս որ աշխարհի հաճոյքին ու վայելքին մինակ մասնակից ըլլալու համար ծներ էք , գիտցէ՛ք թէ Կաղանդի կրկնակ աղուոր օրն իսկ երբ ձեր գըրպանները լեցուն են անուշեղէններով , ձեր տանը պատկից տուն մը կայ ուր մութին մէջ մարդոց ու Աստուծոյ աչքէն հեռու խեղճեր իրենց բերանը կը բանան , կը գոցեն կտոր մը սեւ հացի կարօտ :

Սիրեցէ՛ք աղքատները :

Հիւսէյնիկ

ՄԱՆՆԻՍԵ

Մ Ր Տ Ի Է Ջ Ե Ր

Ա Մ Ա Ն Ո Ք

Յիշատակի մորջ փունջին՝
Ծաղիկ մ'եղաւ հին տարին,
Որուն արեւն հոսկ վերջին՝
Անհունին ծոցն ա'լ տարին :

Հիմակ, տունըն հարուստին,
Ուր կը յորդեն միրգ ու սէր,
Ճաշակելու կը նըստին՝
Հայր, մայր, մանջեր ու կոյսեր :

Արդ, եկած է Ամանոր,
Անծնիւրին սիրտ կ'օրօրուի
Երազներու նորանոր
Արբշիտով կորովի :

Աղբատն հաւրած թոնիրին բով,
Ջագուկները իր երկսեռ,
Կը տարտըզնէ մեծ ճանկով՝
Ձամիչ , պըլուզ (1) ու սիսեռ :

Մէն մը տուն կը բանայ իր
Աւանդական Կաղանդի
Ան գունագեղ փանայիր՝
Ուր թիւը աղբի՛ւր կայ խանդի :

Հաճեր՝ լարով՝ պուխերկէն
Տոպրակնին վար կը կախեն,
Որ լեցուցած ետ զըրկեն,
Թէ ոչ՝ եղա՛ծն ալ քաղեն :

Ամանորի այս հանդէս՝
Մինչեւ Զառտու կը քըշէ ,
Շըւոտն՝ (2) մանուկ մ'իսկ անտես
Ձըներ, միրգով գէթ կ'յիշէ :

(1) Պլուզ = Տրապիզոն խուրմասը, Կաղանդի յատուկ միրգ :
(2) Շուոտ՝ ընտանի թերափ մը, հայերուն Ս. Նիկողայոսը, որ մանուկնե-
րուն բարեկամ ճանչցուած է մանաւանդ :

Մինչ ամէն դի կայտըռէ
Հոգեպարար ու անուշ
Մըթնոլորտ՝ մը կը տիրէ,
Մենք կը մնա՞նք հիշ անյո՛ւշ:

Ահա՛ մեր ալ ճոխ սեղան,
Ուր հոտաւէտ միրգերուն
Դէզերն եկան շուտ զեղան՝
Միւրտ դիւթելո՛ւ չափ սիրուն:

Արդ, մեր միսին ու մըտքին
Լոյս, մանանա՛ միշտ չամրող
Սա՛ մեծերու թանկ կեանքին՝
Դէ՞ծ չը հիւսե՞նք մէկ ներքող:

Բայց. հոս, չորս չոր պատի մէջ
Միայն ցուցնել չենք փորձեր,
Իցի՛ւ բացուէր սիրտի մ'էջ,
Որ կարդայիք ձեր գործեր:

Մեր սիրտն, անմե՛ղ քանարիկ,
Թառած օր մ'ի՛ր բոյնին բով,
Պիտի զարնէ քընարիկ՝
Ձեզ օրհնելու հըրճուանքով:

Ու մեր կեանքով համեստ, լուրջ,
Կ'ուխտենք ըլլալ օր մ'ալ սանկ
Ձեր յարգելի անուան շուրջ՝
Անմահ փառքի ջի՛նջ պըսակ:

Երախտիքի զերդ նըշան,
Հայ մանուկին կողմանէ
Ձօնուած այս երգն աննըշան՝
Թող սիրտե՛րը Թարգմանէ:

Թ. Կարամյան

ԱՆԻՄԵԱԼ ՏՈՒՆԸ

Ճախարակը՝ որ զուարթօրէն կը ճռնչէր քիչ առաջ. լռած է այժմ:

Լուռ ու մթին սենեակին մէջ ընտանեաց մայրը միայնակ,
Ճեռները դրած ծունկերուն վրայ, իր դէմքը տառապանք և անհանգստութիւն մը կ'արտայայտէ:

Ինչո՞ւ համար այսքան տխուր է: Ի՞նչ է ուրեմն այն աղօթքը որ իր դողդոջուն շրթներէն կը խուսափի, կը թռի. արդե՞՛ք յոյժ սիրուած զաւա՞կը կորսնցուց, որուն վերադարձին ի զուր կ'սպասէ:

Ո՛չ, իր փոքրիկ Մարգարիտը այս երեկոյ խրախուսական բարենիշներով վերադարձած է դպրոցէն. ա՛հ, մայրը ո՛րքան փափկօրէն սեղմեց զայն իր գրկացը մէջ. սակայն տառապանաց արտասուքներ տակաւին կը գլտորուին աչքերէն:

Եւ կ'ըսէ. « Կաղանդի գիշեր է, զաւակս, հայրդ տակաւին վերադարձած չէ, կապելան ըլլալու է անպատճառ: Աստուած ի՛մ.

ինչ դժբաղդութիւն , գնա՛ աղջիկս , գնա զայն փնտռէ եւ տուն վերադարձնելու համար շատ մեղմօրէն խօսէ իրեն » :

Եւ պզտիկ աղջիկը կ'երթայ դէպի անիծեալ տունը՝ որ իրենցմէ կը բառնար իրենց ընտանիքին ներկայ եւ ապագայ երջանկութիւնը : Կը տեսնէ հայրը տակառին ետեւը ընկողմանած զեղիւ ընկերոջ մը հետ . կը մօտենայ եւ դողդողալով կ'ըսէ :

— Հայրի՛կ , ճաշերնիս պատրաստ է եւ մայրիկս քեզ կ'սպասէ :

— Թող առանց ինծի ճաշէիք , կը պատասխանէ , անսիրտ հայրը վայրագօրէն :

— Ելի՛ր , սիրելի հայրի՛կ , որ մայրիկս չիւայ , այս գիշեր Կանգնէ :

Անգութ հայրը ա՛լ աւելի զայրացած կը հայհոյէ , եւ կ'ուզէ զայն ետ ճամբել : Սակայն պզտիկ աղջկան սիրտը չդիմանալով հօր նախատալից հայհոյանքներուն՝ կը փղծի , կ'արտասուէ եւ իր յուզիչ արցունքներէն հօր սիրտը մի քիչ ի գութ շարժած առանց բառ մը ըսելու ոտքի կ'ելլէ , կը բռնէ այն դողդողուն ձեռքը՝ որ իրեն համար կ'երկնցնէր եւ փողոցին մէջ աստ անդ զտորուելով կը հետեւի անոր : Դռնէն ներս կը մտնէ ամթահար կռնակը դարձուցած իր խեղճ ամուսնոյն , կարծես թէ վախ մ'ունէր իր երեսը դիտելու . կ'ուղղուի դէպի անկողին եւ կը նետէ ինքզինքը բոլորովին հագուած :

Խեղճ կին , այս գիշեր եւս միւս գիշերներու նման միեւնոյն տխուր աղօթքով եւ միեւնոյն յոյսով պիտի քնանայ . մինչդեռ պզտիկ աղջիկը վերստին պիտի տեսնայ իր երազին մէջ այդ անիծեալ տունը՝ որ մայրիկին ու իրեն պէս այնքան թշուառ մայրեր ու զաւակներ կը լաւէ :

Թարգմ. Մ. Ս. ՔէրթՄէնսն

ՓԻՂԻ ԾԱՆՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՏՆՈՒԻ

Անգլիական պարբերական հանդէսի մը թղթակիցն հետագայ միջադէպը հրատարակեց , որն որ հետքերական է , ո՛չ թէ որովհետեւ խնդիրը լուծելու համար այլեւայլ մեթոտներ առաջարկուած էին , այլ այն չափազանց խոնարհութեան ձեւերուն համար , որ հնդկական քաղաքավարութիւնը կը պահանջէր գործածել զայն իր աշակերտներէն , երբ իրենց ուզուած հարցումի մը վրայ բուն իրենց տեսութիւնները պիտի պարզէին :

« Ազնուական մը մօտերս այցելեց Բէշավարի առաքելական դպրոցն եւ կարգերէն մէկուն մէջ գտաւ մի քանի սրամիտ տղաք :

Անիկա ուզեց փորձել անոնց ուսումնական կարողութիւնը, եւ յետագայ հարցումն ըրաւ անոնց եւ խնդրեց որ ճշդութեամբ լուծեն:

« Հին ատենները Հնդիկ Նապապ մը որ ծանր հիւանդութեան մէջ կը գտնուէր, ուխտեց որ եթէ առողջանար, իր սիրական փիղին ծանրութեանը չափ ոսկի պիտի բաշխէր աղքատներուն: Արդ կը պահանջուի պարզ, առանց ծախսի եւ դիւրին լուծում մը տալ փիղին ճիշդ ծանրութիւնը գտնելու:

« Տասներկու Հնդիկ աշակերտներէ զատ զատ պատասխաններ տրուեցան, զոր ի ստորեւ կը հրատարակենք, իսկ ճիշդ լուծումը՝ զոր տուին երկու Աֆղան պատանիներ՝ կը վերապահենք առայժմ, եւ կը խոստանանք հրատարակել՝ Հանգրափսակի ընթերցողներէն ա՛յն Պարոնին անունին հետ՝ որ կարող կ'ըլլայ այս հարցումին ճիշդ պատասխանել:

Ահաւասիկ տասն երկու աշակերտաց տուած պատասխանները:

« 1. — Զոյգ մը նժար շինեցէք սենեակի մը չափ մեծ եւ փիղը անով կշռեցէք:

« 2. — Հետեւեալը կը յանձնարարէ իմ տկար միաքս: Երկաթուղիին կայարանը պապու մը կայ, որուն անունը չեմ գիտեր, բայց անիկա կարասի կշռելու կշիռ մ'ունի: Եթէ լոկ փիղը կարելի ըլլար անոր վրայ կեցնել, զստահ եմ որ պապուն զայն ճշդիւ պիտի կշռէր, եթէ քաղաքավարութեամբ խնդրուէր այսպէս ընել:

« 3. — Մեծանուն հարցասէր: Իմ կարծիքիս համեմատ միակ կերպը՝ փիղին շուրջը ոսկի դիզելն է. երբ անիկա բոլորովին անով ծածկուի, այդ պիտի ըլլայ իր ծանրութիւնը:

« 4. — Աղերսս՝ գանձատան առաքինի հարցասէրին: Ամենաազնիւ տէր: Նախապատրաստական կարգի սւսանող մ'եմ լոկ. Նախնի իմաստուններ եւ մեծ մարդիկ կարծիք մը յայտնած չեն այս կարեւոր խնդիրին վրայ: Ուրեմն ի՞նչ պիտի ըսեմ ես, խոնարհս: Քանի որ համեստ էակիս կարծիքը հարցուած է, սա է թէ՛ լաւ պիտի ըլլար կենդանին քերթել եւ յետոյ մորթը ոսկիով լեցնել: Ասիկա գրեթէ իր ծանրութիւնը պիտի տար:

« 5. — Իմ առաջարկս սա է որ կենդանին խտով կերակրը ունելու եւ յետոյ կշռուելու է: Ի՛նչ քանակութեամբ որ ուտէ իր ծանրութիւնը պիտի ներկայացնէ:

« 6. — Փիղը թելով մը թող չափուի. նոյն համեմատութիւնով ոսկիէ փիղ մը թող շինուի: Այդ պիտի ըլլայ իր ծանրութիւնը: Ստուգիւ ասիկա է գաղտնիքին լուծումը:

« 7. — Պառկեցուցէք զայն եւ վրան դրէք զայն ծածկելու չափ ոսկի: Այդ պիտի ըլլայ իր ծանրութիւնը:

« 8. — Ծախեցէք զայն. քանիի որ ծախուի՝ իր ոսկիով ծանրութիւնն է :

« 9. — Բեռցուցէք զայն որքան որ կարենայ վերցնել, իր ոսկիով ծանրութիւնն է :


« 10. — Կաւէ փիղ մը շինեցէք նոյն համեմատութիւններով, եւ յետոյ կշռեցէք :

« 11. — Դո՛ւ, ո՛վ մեծ, ասիկա է խորհուրդը որ իմ տկար մտքիս մէջ կուգայ. Հաստատապէս ամենալաւ կերպը զայն պատառ պատառ կտրել եւ յետոյ կշռելն է : Ազնուականը վնասէ զերծ ընելու համար նախ փիղը ծախեցէք. յետոյ զայն կտրեցէք. Բայց գուցէ այս վճիռը ձեր բարձրութեան չի կրնար յանձնարարուիլ. անգոր մտքի տէր արարածը ուրիշ խորհուրդ մը ունի դեռ : Բաւական խոշոր փոս մը փորեցէք, փիղը մէջը դրուելու չափ, յետոյ ատիկա ոսկիով լեցուցէք : Այդ պիտի ըլլայ իր ծանրութիւնը :

« 12. — Փիղը արեւուն դիմացը կանգնեցուցէք, իր շուքը ոսկիով ծածկեցէք : Այդ պիտի ըլլայ իր ծանրութիւնը » :

Մարգուան


Ս. Կ. ՄԱԹԻԿԵԱՆ



ԿԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆԻՔ

ՊԱՂՈՒԹԵԱՄԲ ԶՈՒՐԸ ԵՌԱՑՆԵԼ


Ջուրը ո՛չ համ, ո՛չ հոտ եւ ո՛չ գոյն ունի, ոչ կծու է եւ ոչ թթու, եւ երբոր զուտ լինի՝ փայլուն ու թափանցիկ է : Ամէն



բարեխառնութեան տակ շոգի կ'արտադրէ եւ սովորական մթնոլորտական ճնշումով, եռացման կ'ենթարկուի. բայց ճնշումը ջու-

րին եռացման այդ կէտին վրայ մեծ ազդեցութիւն ի գործ կը գնէ, ինչոր կրնայ հաստատուիլ հետեւեալ փորձով:

Կ'առնենք ապակեայ շիշ մը երկայն վիզով եւ մէջը եռացած ջուր լեցնելէն վերջ, բերանը կը գոցենք, քանի մը վայրկեանէ յետոյ ջուրը կը դադրի եռալէ եւ ամանին մէջ օդ կը ցանցառնայ: Եթէ այդ պայմաններուն մէջ, ամանն եւ իր պարունակութիւնը յանկարծ ընկղմենք խիստ պաղ ջուրի մէջ, շիշին ջուրը կ'ոխի եռալ՝ իբրեւ թէ կրակի վրայ եղած ըլլար:



Ֆակլայով կարկանդակին լուծումը

Լաբիրինթոսի ուղեգիծը կրցաւ լուծել Ազնիւ Պարոն Արեակ Կ. Սեֆերեան:

Տպագրիչ եւ Հրատարակիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱՆԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻՆՏԱՍԻ ԼԵԱԳՐԻ ԴԷՍ

Գաւառները գլխաւոր քաղաքներու մէջ ընդհանուր ներկայացուցիչներ ունի տպարանս, որոնց կրնան դիմել տպագրական ամէն տեսակ գործեր ունեցող, եւ կամ ո՛ր եւ է գրքի մը պէտք ունեցողները, եւ փոխարժէքն անոր վճարելով, կ'ընդունին ապսպրանքները: Այս միջոցով իրենք կ'ազատին թէ՛ աւելորդ ծախսերէ եւ թէ՛ նամակի եւ այլ կորուստներէ. եւ ինչ որ ամէնէն կարեւորն է, փոքր գումարներու փոխադրութեան համար յառաջ եկած դժուարութիւններէն ու հոգերէն կ'ազատին:

Գաւառներու մէջ Հանրագիտակի Մեծ. Գործակալներու դիմողները կրնան սա առաւելութիւնն ալ վայելել որ, թէ՛ իրենց յանձնարարութիւնները կէտ առ կէտ կը կատարուին ամենակարճ ժամանակի մէջ եւ թէ՛ միշտ վստահելի անձնաւորութիւն մը կ'ունենան իրենց մօտ պատասխանատու ամէն առթիւ:

Օրինակի համար, եթէ Ամասիայի կամ չրջականերէն մէկն ուզէ Ժողովրդական Տարեցոյց մը գնել, Հանրագիտակի բաժանորդագրուիլ, այցաքարթ մը, նամակի անթէթներ, փոխանակագրի

տետրակներ, ինչպէս նաև զանազան հեղինակներու պատկանող գրքերէն ունենալ, փոխանակ շորս հինգ տեղեր նամակ գրելու, աւելի լաւ կ'ընէ եթէ զիմէ ուղղակի Մեծ. Հայկազուն էֆ. Խանդավուրի եւ տասը վայրկեանի տեսակցութեան մը մէջ ամէն ուզածը յայտնելէ վերջ հանդարտօրէն իր գործին նայի, վստահ ըլլալով որ իր յանձնարարութիւնները կէտ առ կէտ եւ կարելի եղածին չափ փութով կը կատարուին եւ իրեն կը յանձնուին Մեծ. Հայկազուն էֆ. Խանդավուրի միջոցաւ:

Այս կերպով գրենական ու տպագրական գործերու մէջ ամէն տեսակ դիւրութիւն կրնան վայելել անոնք որ մեր ներկայացուցիչ ունեցած քաղաքներու մէջ կամ անոնց շրջակայները կը գտնուին:

Մեր Մեծ. Գործակալներուն և Հանրագիտակի բաժանորդագրութեան պայմաններու մասին տեսէք հետեւեալ ցանկն:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդավուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլկէրեան
Նւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Նոզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա'ա, Միսաք էֆ. Ս. Մելգոնեան
Թալաս, Կարապետ էֆ. Գօճանեան
Թեփրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Նրուանդ էֆ. Նրկաթեան
Կիւրին, Գրիգոր Մ. էֆ. Խանդավուր
Հալեպ, Ս. էֆ. Պօտիկեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Գրիգոր Կահ. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս ԲՆ. Շահինեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Քարակալուրեան և Ընկ.
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Նիսաւր, Յովհաննէս էֆ. Փանոսեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքարուրեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէյլէրեան
Տիւրքմէն, Լևոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆ

THE LANCET

1875

1875

1875

1875

1875

1875

1875

1875

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Ամէնէն Ժողովրդական, Ամէնէն Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅԸ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Քօնստը. — Ագահութիւն. — Պարտաւորեալ ինը տարի տուաջ (Յանագող Լուսիւնեան). — Հազարումէկ կերպիւր ժամի գիտնալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչու եւ չի՞ յաջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխտեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Ուրիերմ եւ կայծակը. — Քաան եւ ... դարու հաշ մը. — Կրօնիներու պատմութիւնը. — Այծեամի որսը. — Հարսի մը պատրուէն (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու տեղ. — Կշտնաւոր միտկանքներ. — Մխիթարական բուրբ յոռետեա բարեկամիս (Քասիմ). — Կրկնագործական Պատասխաններ. — Օգտակար գիտելիքներ. — Յաւին դարձան. — Աշխարհիս նախնական վիճակները. — Աջկերու տառաջութիւնը. — Ակամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը գտնող պարտնը. — Տոմարակնիդ, պարսնա՛յի. — Հինգ առ հարիւր տոկոս. — Կամակարգումը լեզուն. — Զուարճալի դատաստան. — Թօթօ. — Քարնիշունի երազը. — Մեղրալուսնի համբարդութիւն. — Մայր ու աղայ. — Ա.Կ.Ն.ՅԻ ՍԱՐԱՅ ՄԸ. — Գիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռասենին. — Քաան բարաջով աշխարհիս ոսկին. — ԽՐԸՄԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒՄԱՐՅԱԼԻՔՆԵՐ եւայն, եւայն.

Գինն է 5 Դանեկան. — Գաւառներ՝ թղթատուով 6 Դանեկան

Հանրագիտակի բոլոր Գործակալներու հով

Ազգակի մեծէ հինգ հաս գնողներուն վեցերորդ մը նուէր կը տուի



